ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք, ՀՀ
Լոռու մարզ, գ.Միխայելովկա, Հեռ. (093) 261888 ,
mikhayelovka.lori@mta.gov.am

Ն Ե-27
27 փետրվար 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ուղարկում ենք համայնքի ղեկավարի թիվ 06-Ա, 07-Ա, 08-Ա որոշումները և ավագանու թիվ 04-Ն որոշումը:

Առդիր 10 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Դալլաքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 06-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, ի կատարումն Լոռու մարզպետի 16 փետրվարի 2017 թվականի թիվ 75-Ա որոշման՝

Ո ր ո շ ու մ եմ.

Միխայելովկա համայնքի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Միխայելովկա համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

1) Համայնքի 2017թ. բյուջեում նախատեսել գումարներ՝ բնական երևույթների և տարերային աղետների կանխարգելմանը և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների համար և մինչև 01.03.2016թ. տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն.

2) Յուրաքանչյուր ամիս մինչև այդ ամսվա 30-ը ներկայացնել տեղեկատվություններ՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ՝ համաձայն թիվ 2 հավելվածի (տեղեկատվություններ ուղարկել**lorimpv@mail.ru** էլեկտրոնային հասցեին).

3) Մինչև ս/թ մարտի 1-ը կազմել համապատասխան միջոցառումների պլան « Միխայելովկա համայնքի տարածքում 2017 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման» մասին և ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն՝ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար.

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Միխայելովկայի համայնքապետարանի առաջատար մասնագետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ**

Հավելված 1
Միխայելովկա համայնքի ղեկավարի
2017թ. փետրվարի 27-ի
թիվ 06-Ա որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ՄԻԽԱՅԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումները	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Համայնքի ղեկավար	Մինչև 15.03.2017թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցներն ամրացնելու համար:		
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մինչև 15.03.2017թ.
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում շինարարական և դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մշտական
5.	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարների մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Առաջատար մասնագետ	Ամեն օր, սկսած 01.03.2017թ.
6.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:	Առաջատար մասնագետ	Մինչև 15.03.2017թ.
7.	Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար:	Առաջատար մասնագետ	Մինչև 15.03.2017թ.

8.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Համայնքի ղեկավար	Մինչև 15.03.2017թ.
	2. Հիմնական միջոցառումներ		
9.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Համայնքի ղեկավար	Մշտապես
10.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում
11.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ	Անհրաժեշտության դեպքում
12.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Համայնքի ղեկավար	Ըստ անհրաժեշտության
13.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում

ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հավելված 2
Միխայելովկա համայնքի ղեկավարի
2017թ. փետրվարի 27-ի
թիվ 06-Ա որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

[redacted] ամսվա ընթացքում Լոռու մարզի Միխայելովկա համայնքում
ՀՀ պետական և համայնքային բյուջեներով նախատեսված արտակարգ իրավիճակների
կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ

ՀՀ ը/կ	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Նշումներ կատարման վերաբերյալ
1	2	3	4	5
I. Պլանավորված միջոցառումներ				
II. Պլանից դուրս անցկացվող միջոցառումներ				

Համայնքի ղեկավար _____ Լ.Դիլբարյան

ՄԻԽԱՅԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 07-Ա

2016ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 71-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Իրավական ակտերի մասին օրենքի հոդված 72-ով,

որոշում եմ՝

Միխայելովկա համայնքի 2016թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 71-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 08-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով և "Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով, նկատի ունենալով Միխայելովկա համայնքի բնակչուհի Անահիտ Տոնոյանի դիմումը, որոշում եմ՝

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բնակելի տունը , անասնագոմը և տնամերձ հողամասը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքում և չեն հակասում գյուղաշինական նորմերին, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սերվիտուտ չեն առաջացնում, ինչպես նաև հաշվառված չեն որպես ինքնակամ կառույցներ, Միխայելովկա համայնքի 7 փողոց տուն 12 հասցեում գտնվող Անահիտ Տոնոյանին սեփականության իրավունքով պատկանող 160.65 քառ. մ բնակելի տան, 65.30 քառ.մ անասնագոմի և 0.4126 հա տնամերձ հողամասի նկատմամբ կատարել հիմքի վերականգնում:

2. Ճանաչել նշված հասցեում գտնվող 160.65 քառ. մ բնակելի տան, 65.30 քառ.մ անասնագոմի և 0.4126 հա տնամերձ հողամասի սահմանները ըստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Տաշիրի տարածքային ստորաբաժանում:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՊԻԼԲԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Միխայելովկա համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Միխայելովկա, (093) 261888, mikhayelovka.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» փետրվարի 2017 թվականի N 04- Ն

ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Միխայելովկա համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Միխայելովկա համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Միխայելովկա համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Դիլբարյան Էդիկ		-	-
2. Դիլբարյան Վլադիմիր		-	-
3. Հակոբյան Աղունիկ		-	-
4. Վարդանյան Արսեն		-	-
5. Մնացականյան Նունե		-	-

Միխայելովկա համայնքի ղեկավար՝ Լ. Դիլբարյան

Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Միխայելովկա համայնքի ավագանու

2017թվականի փետրվարի 24-ի թիվ 04-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2016թվականին Միխայելովկա համայնքի զարգացման ծրագրով նախատեսված էր իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում
2. Ֆուտբոլի դաշտի վերանորոգում
3. Ջրագծերի վերանորոգում և ջրամատակարարման բարելավում

Միխայելովկա համայնքում 2016թվականի ընթացքում իրականացվել են համայնքի զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքները:

Ներհամայնքային ճանապարհների բարեկարգման համար նախատեսված 2000.0 հազար դրամից ծախսվել է 1847.0 հազար դրամ, մնացած գումարը չի օգտագործվել աշխատանքների դադարեցման պատճառով:

Ֆուտբոլի դաշտի վերանորոգման համար նախատեսված 590.0 հազար դրամը ամբողջությամբ ծախսվել է, կատարվել են ծրագրով նախատեսված համապատասխան աշխատանքներ:

Ջրագծերի վերանորոգման և ջրամատակարարման բարելավման համար նախատեսված 2000.0 հազար դրամը ամբողջությամբ ծախսվել է, կատարվել են ծրագրով նախատեսված համապատասխան աշխատանքներ:

Համայնքի ղեկավար՝ Ղ. Ղիպբարյան